ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1951 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ս. ԹՈՎՄԱՍՅԱՆ-«ՄԻ ԷՋ ԿՈՎԿԱՍԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ»[1]

Ընկ. Ս. Թովմասյանի «Մի էջ Կովկասի պաշտպանությունից» գրքում նկարագրվում է Կովկասի հերոսական պաշտպանությունը սովետական գորքերի կողմից գերմանա-ֆաշիստական օկուպանտների դեմ մղված մարտերում։

Իր գրքում ընկ. Թովմասյանը նկարագրել է բազմաթիվ էպիզոդներ մեր հայրենիքի փառքի ու անկախության համար կռվող ՍՍՌՄ բազմազգ ժողովուրդների զավակների կյանքից, գրի է առել հմուտ ու խիզախ տակտիկական գործողություններ, խիզախության, անձնազոհության, ընկերասիրության վառ օրինակներ, որոնցով նա դրսևորում է ժողովուրդների ստալինյան բարեկամության, թիկունքի և ռազմաճակատի միասնության, ինտերնացիոնալիզմի և սովետական հայրենասիրության ջերմ ոգին։

Հայրենիքի նկատմամբ անհուն նվիրվածությամբ տոգորված ռուս, ուկրաինացի, բելոռուս, վրացի, ազրբեջանցի, հայ և այլազգի զավակները՝ հաղթահարելով Կովկասյան լեռնաշղթայի բոլոր արգելքները, ջախջախիչ հարվածներ են հասցնում գերմանական 101-րդ ալպինիստական դիվիզիային, որը երկու տարի վարժվելով Հյուսիսային Իտալիայի լեռներում, 1942 թվին շտապ կերպով փոխադրվել էր Հյուսիսային Կովկաս, Կովկասյան լեռնաշղթան ներխուժելու համար։

Զորային միավորումները իրենց մարտական մկրտությունը ստանալով Բզիպ գետի ափերին, թևանցելով գերմանացիների դիրքերը, դրսևորում են Փսխու գյուղը, որի վրա կարմիր դրոշակ են բարձրացնում հրամանատար Պանցևիչի մարտիկները, որոնք, ջախջախելով գերմանական խմբավորումներին, անցնում էին Սանչարոյի հյուսիսային կողմը։

Ընկ. Թովմասյանն իր դրանցումների մեջ տալիս է հարուստ և հետաքրքիր փաստեր Անդրկովկասի ժողովուրդների ստալինյան բարեկամության մասին, որն ավելի քան ամրակուռ է դառնում Հայրենական մեծ պատերազմի տարիներին, պատմում է զորային միավորման ճանապարհին հանդիպած կոլտնտեսականների ջերմ վերաբերմունքը՝ ժողովուրդների ազատությունը պաշտպանող Սովետական Բանակի նկատմամբ։

Տեղական պարտիական-սովետական օրգանները, մոբիլիզացիայի են ենթարկում ամեն ինչ, օգնում հրամկազմին՝ զինվորների մարտունակությունը և նրանց բարոյական վիճակը բարձր պահելու համար։

Գրքի «Մարտական կարգերից այն կողմը» վերնագիրը կրող գլխում ականատես հեղինակը, նկարագրում է գերմանաֆաշիստական զավթիչների կատարած բարբարոսությունները, որոնք ոչ միայն ավերում ու թալանում էին մեր երկիրը, կործանում մեր կուլտուրան, այլև սովետական քաղաքացիներին քշում տաժանակիր աշխատանքի, դաժան կերպով ծեծում, տանջանքների ենթարկում ու գնդակահարում նրանց։ Փսխու գյուղում գերմանացիների հաստատած «Նոր կարգի» նկարագրությամբ տրվում են բազմաթիվ փաստեր, որոնք կարդալով ընթերցողը կրկին ու կրկին ատելությամբ է վերհիշում հիտլերյան դավթիչների կատարած վայրագությունները մեր երկրում։

Հեղինակը «Բարձունք 1006» գլխում նկարագրում է Սանչարոյի համար մղված մարտերը։ Երկու գետերի միջև ընկած է լեռնային գագաթը, որի փեշերին ձգված է բարձր ժայռաշարքը և անմատչելի անդունդը, միակ ճանապարհը մնում է գրոհ՝ շավիղով դեպի վեր, գրավելու համար այդ բարձունքները և հասնելու Սանչարոյին։ Հաղթահարելով բոլոր արգելքները, հերոս մարտիկները թափանցում են թշնամու ամրության շրջանը, ջախջախում ու ոչնչացնում են գերմանական օկուպանտներին։

Հուզիչ է, երբ հերթական մարտերից հետո հանգստի ժամին Դոնբասից սերժանտ Մ. Կոստրուկովը, ոգևորվելով իր և ընկերների հաղթանակով, հաստ ծառի բնի վրա փորագրում է.

---

[1] *Ս. Թովմասյան - Մի էջ Կովկասի պաշտպանությունից (քաղ. աշխատության գրանցումները). Հայկական ՍՍՌ ԳԱ-ի հրատարակչություն, Երևան 1950 թ.։*

Донбас
М. КОСТРЮКОВ
19 $\frac{11}{9}$ 42 г.

որպեսզի պատերազմից հետո, երբ ինքը ալպինիստական արշավի գա Կովկասյան լեռները, այդ անտառում տեսնի իր փորագրած ծառը, վերհիշի, վերապրի անցած օրերով։ Դժբախտաբար համառ մարտերում ծանր վիրավորվում են նրա ընկերները՝ Ստրոգովն ու Մարգիսովը, ընկնում է հրամանատար Գանցևիչը, որին դուրս բերելու համար սողալով մոտենում է գումարտակի կոմիսար Վալենտինը։ Նա ևս վիրավորվում է ոտքից և չի կարողանում հրամանատարի դիակը դուրս բերել։ Կոստրուկովը այդ օրը իր սնայպերական կրակով շատ հիտլերականներ էր հանել շարքից։ Կոստրուկովը սողեսող գնում է հրամանատարի դիակը դուրս բերելու, բայց ընկնում է նրա կողքին առհավետ։

Գուղաուտի կործանիչ գումարտակի ընկերները հիշելով նրա փորագրած ծառը, իջնում են անտառ, գտնում մեծ, բայց ծանոթ ծառը, որի տակ թաղում են Կոստրուկովին և լրացնում այն.

Донбас
Сержант
М. КОСТРЮКОВ
19 $\frac{11}{9}$ 42 г.

погиб смертью храбрых в боях за родину.

Այս հերոսի կողքին կռվում էին բազմաթիվ հերոսներ, լեյտենանտ Վլադիմիր Ցվետկովը, կրտսեր սերժանտ Մակար Կարպովիչ Սերեգան, կարմիրբանակային Գեորգի Միխայելովիչ Սարկվալիձեն, ավագ քաղղեկ Ալեքսանդր Դանիելյանը, որոնք առաջինը երևացին 1006 բարձունքի գագաթին։ Նրանք կռչում էին առաջ, հանուն Ստալինի, հանուն Կովկասի։ Ոմանք ընկնում են, իսկ ստորաբաժանման մարտիկները համառ կերպով գրոհում են դեպի 1006 բարձունքի գագաթը։

Հեղինակը այնուհետև պատմում է Սանչարոյի լեռնանցքի գրավումը, թվարկում է այդ համառ մարտերին մասնակցած բազմաթիվ հերոսների, որոնք պատկանում են տարբեր ազգությունների, բայց տոգորված են մի ցանկությամբ — կռվել — հանուն սովետական հայրենիքի։ Հեղինակը նկարագրում է ստորաբաժանումներում կատարվող պարտիական քաղաքական աշխատանքը, որը տարվում է ամենուրեք և հարատև, կոփում մարտիկների կամքը, հաղթանակ ներշնչում յուրաքանչյուր կռվող զինվորի մեջ։

Իրար կողք կողքի կռվող Մալիշևը, Իբրահիմովը, Սարկվալիձեն և Ամիրյանը, բոլորն էլ տոգորված են հայրենիքի պաշտպանության գաղափարով, հաղթանակի անսասան հավատով։

Համառ մարտերից հետո իրագործվում է մարտական հրամանը, ջախջախելով հիտլերականներին, Սանչարոն գրավվում է, գագաթի ամենաբարձր կետում Զերնոբրովին բարձրացնում է կարմիր դրոշակը, բայց դրոշի տակ՝ հերոսի մահով ընկնում է Զերնոբրովին, իսկ զորային միավորման մարտիկները խորն ատելությամբ լցված դեպի գերմանաֆաշիստական դավթիչները, շարժվում են առաջ, ջախջախելու մեր երկիրը մտած օկուպանտներին, որոնք սպառնում էին մեր հայրենիքի անկախությանը։

«Մի էջ Կովկասի պաշտպանությունից» գիրքը զերծ չէ նաև որոշ թերություններից։ Առաջին գլխում «Մարտական առաջին խրնդիրը» վերնագրի տակ (տես 5-րդ էջը), նկարագրվում են այն օրերը, որ ապրում էր մեր հայրենիքը Կովկասի պաշտպանության օրերին, միայն վերջին (9-րդ, 10-րդ) էջերում, խոսվում է մարտական խնդրի մասին։ Վերնագիրը չի համընկնում բովանդակությանը։

Գրքի 23, 30, 35, 53, 71, 77, 81, 89 և այլ էջերը ծանրաբեռնված են տակտիկական գործողությունների միատեսակ նկարագրությամբ։

Գրքում գրված մարդկանց մասին խոսելիս, հաճախ անուն, ազգանուն, հայրանուն լրիվ չի տրվում, առանձին դեպքերում նույն մարդու մասին, տարբեր էջերում, տարբեր կոչումներով է խոսվում, ինչպես, օրինակ, էջ 7, 8, 16, 27 և ուրիշները։

Կան լեզվական և ոճական սխալներ, անհարթ նախադասություններ։

Թվարկած վերոհիշյալ թերությունները չեն նսեմացնում ընկ. Թովմասյանի գրքի արժեքը, որը կարդացվում է հետաքրքրությամբ։ Քաջալերելով ընկ. Ս. Թովմասյանի նախաձեռնությունը, պետք է ասել, որ միանգամայն գովելի է նման աշխատությունների հրապարակումը։

Կ. ԿՈՋՄՈՅԱՆ